




Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարեկանը 6 րուբլ:  
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խորագրատան մէջ:  
Մեր հասցեն. Тифлисъ. Редакція «Маскъ».  
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են  
խաւքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Տարրական, միջնակարգ և բարձրագոյն իդա-  
կան ուսում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի յօդու-  
նի առթիւ. Նամակ փոփոխ. Նամակ Բագրի-  
նեքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վանի  
կուսակալի հեռագիրը. Աւստրո-Ռուսական թա-  
ղաքականութիւնը. Նամակ Թիւրքիայից.—Արտա-  
քին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՅԻՆԵՐ.—  
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պա-  
րիզից.

ՏԱՐԻԱԿԱՆ, ՄԻՋՆԱԿԱՐԳ ԵՒ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ  
ԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄ

II  
Սրանից 25—30 տարի առաջ, երբ  
հիմնական Անդրկովկասում առաջին հայոց  
իգական դարձը, և երբ դա հետ միասին  
սկսեց արձաճել օրիորդներին ուսում  
տալու միտքը, մեր ժողովուրդը օրիորդա-  
կան դպրոցից ուրիշ ոչինչ չէր սպասում,  
բայց եթէ այն, որ աղջիկներին դրել կար-  
դաւ սովորեցնեն, այնքան որ,—ինչպէս մեր  
ամբոյն էր ասում,—նա «բարեկարգ» կա-  
րողանայ դրել:

Անցաւ մի փոքր ժամանակ, թէ դու-  
րոցի և թէ ժողովրդի պահանջները ի  
հարկէ աւելի լայնացան, և նոյն իսկ մեր  
նախապաշարված ամբողջ հակառակ չէր  
այն բանին, որ օրիորդական դպրոցում  
սկսեցին սովորեցնել թուաբանութիւն, աշ-  
խարհագրութիւն, և մինչև անգամ բնագի-

տութիւն, որի մասին հէնց առաջին քայ-  
լափոխում մեր ժողովրդի մէջ այն հեգնա-  
կան կարծիքը կազմվեց, թէ երեսներին  
դպրոցում անաստուածութիւն են  
սովորեցնում, և քարոզում են, որ «մարդը  
կապիկից է առաջ եկել»....

Սակայն չը նայած այդ բոլորին, մեր նոր  
դպրոցի և ժողովրդի մէջ առեւտրութիւն  
չընկաւ, և շատ կարճ միջոցում, ոչ աւելի  
քան 10—15 տարեկան ընթացքում իգական  
կրթութեան դրժը անցաւ իր բնական  
զարգացման մի քանի փուլերէն, և միջ-  
նակարգ դպրոցներ հիմնուեցին հետ միասին,  
երբ սկսեցին երեւալ դպրոցական ասպարի-  
զում կրթված և ուսեալ կանայք, և երբ այդ  
դպրոցներից դուրս եկան բաւական նախա-  
պաշարաւոր, ոչ թէ միայն «բարեկարգ»  
դրելու և գրելու—կարդալու ընդունակ, այլ  
նոյն իսկ ուսուցանելու և վարժուհի լինե-  
լու կարող աղջիկներ, մեր իգական սեռի  
մէջ կանանց աշխատանքի հիմքը  
դրվեցաւ, և հայ կինն էլ սկսեց գործել,  
անկախ գործ կատարել, և իր աշխատան-  
քով ինչպէս ասում են, փող վաստա-  
կել...

Մեր իգական դպրոցների և մեր կանանց  
զարգացման մէջ դա ամենանշանակաւ մի  
պերիօդ է, որի մէջ, ընտանեկան նեղ  
շրջանից դուրս, մի որ և է ընդհանուր  
գործով, մի որ և է աշխատանքով զբաղ-  
վելու ձգտում էրեւայ և առաջին ան-  
գամ այդ ձգտումը իրագործվեց մանկա-  
վարժական ասպարիզի վրա, երբ հայու-

հին սկսեց վարժուհիութիւն անել:  
Վարժուհիութիւնից առաջ հայ օրիորդը  
կամ հայ կինը ուրիշ որ և է պարագայում  
չէր ծանաչում, և այդ պատճառով ման-  
կավարժական ասպարիզում գործող հայ  
վարժուհիները իրանց բոլոր պակասա-  
ւոր կողմերով անգամ մեր իգական սեռի  
զարգացման պատմութեան մէջ՝ կանանց  
անկախ աշխատանքի տեսակետից կրկնակի  
նշանակութիւն ունեն, որովհետեւ դրանց  
ձեռքով զուտ մանկավարժական զբաղմուն-  
քի հետ կապվեցան նաեւ աշխատանքի խն-  
դիր իբրեւ մի մեծ նորութիւն մեր մէջ: Ուս-  
տի և շատ ցանկալի էր իգական դպրոցնե-  
րի հիմնել և բազմացնելը, որոնք մի կող-  
մից աղջիկներին ուսում մատակարարելով  
միւս կողմից էլ թէ հայոց և թէ կառա-  
վարչական միջնակարգ դպրոցներում աւար-  
տած հայուհիներին աշխատելու և անկախ  
կերպով մի որ և է գործով զբաղվելու մի-  
ջոց էին տալիս: Եւ այդ ցանկութիւնը մեծ  
աղոթութիւն ունեցաւ, քանի որ կարճ մի-  
ջոցում, այն է 15—20 տարեկան ընթաց-  
քում՝ Անդրկովկասում տղայոց դպրոցների  
հետ միասին իգական դպրոցներ թիւն էլ  
սկսեցին զգալի կերպով բազմանալ, և մենք  
տեսնում ենք, որ այդքան ժամանակամիջո-  
ցում՝ օրիորդական դպրոցների թիւը,  
որը սրանից մի քանի տարի առաջ մի եր-  
կու—երեք հաւա էր, ութսունական թա-  
կաններում 150-ից անցնում է, որոնց մէջ  
մի քանի հարիւր հայուհիներ վարժուհի  
պաշտօն էին վարում, և ուր սովորում

էին հազարաւոր աղջիկներ, մեր ժողովրդի  
բոլոր դասակարգերից և բոլոր շրջաններից:  
Այդ հոսանքը, որ անկասկած մեծ յե-  
ղափոխութիւն դրեց մեր ժողովրդի հաս-  
կացողութիւնների մէջ, որը կնոջ վրա եր-  
բէք չէր նայում իբրեւ անկախ կերպով աշ-  
խատելու ընդունակ արարածի վրա, ունե-  
ցաւ իր այն բնական հետեւանքը, որ հա-  
յուհին սկսեց ձգտել դէպի աւելի առաջ,  
իսկ այդ ձգտումը տարաւ նրան միջնա-  
կարգ դպրոցից դէպի բարձրագոյն դպրոց-  
ները, դէպի գիտութեան աւելի բարձր շը-  
ջանները, որտեղ նա անկասկած պէտք է  
ձեռք բերէր թէ աւելի մեծ մասնաւոր պա-  
շար, և թէ աւելի ոյժ՝ անկախ դեր կա-  
տարելու և անկախ աշխատանք ունենալու:  
Թէ Ռուսաստանի և թէ արտասահմանի  
բարձրագոյն դպրոցներում շատ տարի է  
արդէն, որ ոտք է դրել հայուհին, թէ և  
տարաբաղաւոր այդպիսիների թիւը ոչ  
թէ շատ մեծ չէ, այլ շատ էլ աննշան է:  
Եթէ մեր ձեռքի տակ լինէին վիճակագրա-  
կան տեղեկութիւններ մեր թեւրով կը  
ցոյց տային, որ բարձրագոյն ուսման դի-  
մող հայուհիների թիւը այժմ զույգ է քը-  
սանի էլ չէ հասնում.—բարձր ուսում ստա-  
ցող մի խումբ հայուհիներ սովորում են  
Շվեյցարիայում, իսկ մի քանի հոգի էլ  
ցրված են ուրիշ քաղաքներում՝ այս կամ  
այն մասնագիտութիւնը ուսումնասիրու-  
նապատակով: Սակայն, քանի որ բարձրագոյն  
ուսման խնդիրը մեր կանանց համար իս-  
կապէս մի նորութիւն է, ուստի և մեզ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐԻԶԻՑ

II  
Յունիսի 20-ին (8-ին), այն օրը, երբ պէտք է  
կայանար Կրօնների միջազգային կոնգրէսը,  
բոլոր անդամներն, նիստի բացվելուց առաջ,  
ժամը 11-ին առաւօտեան հաւաքակցանք ցուցա-  
հանդիսի ռէստորաններից միում, այն է Maxe-  
ville ասված փառաւոր ռէստորանում, այդտեղ  
ընկերով շախմատային անկող. համար Այդտեղ  
միմանց հետ մօտիկ ծանօթացանք և ապա բո-  
լորս միասին, ժամը 2-ին դնացինք Տրոյադէոսի  
պալատի դահլիճը, որտեղ և պէտք է կայանար  
կոնգրէսի բացումը: Գեղեցիկ և ընդարձակ դա-  
հլիճ լի էր բաղնիքներով, որը մի քանի հարիւր  
հոգուց էր բաղկացած: Նիստը բացեց կոնգրէսի  
նախագահ պ. Ժիւլ Սիմօն մի խելացի ճառով, ո-  
րի մէջ բացատրեց գրականութեան և մամուլի  
հարգին նշանակութիւնը այժման դարում, ապա  
խօսեց գրական սեփականութեան նշանակու-  
թեան մասին: Ընդհանրապէս Ժիւլ Սիմօն, եր-  
կու զլուաւոր նպատակ ունի. նախ մշակել գրա-  
կան սեփականութեան վերաբերեալ կանոնները,  
որոնց ցանկալի է ընդունված տեսնել բոլոր եւրո-  
պական պետութիւններից, և ապա սերտ և եղ-  
բայրական կապեր հաստատել բոլոր երկրների  
գրողներին մէջ: Գրական սեփականութեան թիւնա-  
միներով, շարունակեց պ. Ժիւլ Սիմօն, հիմնում  
են իրանց դատողութիւնը այն պատճառով վրա,  
որ միտքը ազատ է, որ նա իրաւունք չունի մի-  
նի կամ միւսի անձնական սեփականութիւն լի-  
նել, այլ ընդհանրութեան սեփականութիւն է:  
Բայց դա հիմնովին սխալ և վնասակար գաղա-  
փար է. գրչի աշխատանքին նուիրված մարդը,  
որպէս զի նրա յայնանման մտքերը ամեն տեսակ  
ճշմունքից ազատ լինեն, պէտք է նախ և առաջ  
նիւթագէտ անկախ դիրք ունենայ: Եթէ ոչ, մենք  
կը վերադառնայինք այն ամբողջ ժամանակ-  
ներին, երբ ամենաբարեւելի, ամենահանճարաւոր  
գրողները, իրանց մտքի արգասիքները արդիւնա-  
բերելու համար, ստիպված էին գիմել հասարա-

կական գիրք, կամ հարստութիւն ունեցող հովա-  
նաւորներին և հարստահարիչ հրատարակիչնե-  
րին: Միտքը պէտք է կատարելագոյն ազատ լի-  
նի, չը ճանդիպի իր ընթացքին մէջ ոչ մի արգել-  
քի, իսկ ինքն գրողը, այսինքն ազատ մտքի ար-  
տադրող՝ պէտք է բարոյապէս և նիւթագէտ ան-  
կախ լինի դրսի որ և է ներգործութիւնից: Այդ  
է պատճառը, որ մեզ համար թանգ է գրական  
սեփականութեան և նրա վերաբերմամբ հաստատ  
օրէնսդրութեան ընդունվելը, որը միակ միջոց է  
նիւթագէտ ասպարիզացնելու և ուրեմն բարոյա-  
պէս անկախ դարձնելու գրողներին:

Ապա նախագահը ողջունեց ժողովին ներկայ  
գտնված օտար գրականութեան ներկայացուցիչ-  
ներին, որոնցից ամեն մէկը մի երկու խօսքով  
պատասխանեցին նախագահին, շնորհակալութիւն  
յայտնելով Ֆրանսիական հիւրասիրութեան հա-  
մար՝ իրանց կողմից ողջունելով կոնգրէսի բա-  
ցումը: Օտարերկրացի գրողների թիւում կային  
գերմանական, իտալական, սպանիական, բելգի-  
ական, չիլէյցարական, լեհական, ռուսաց, հայոց  
և այլ գրականութիւնների ներկայացուցիչները:  
Ապա խօսեցին և մի քանի ֆրանսիացի գրողներ,  
ցոյց տալով իրանց ճառերի մէջ միջազգային  
գրական կոնգրէսի նշանակութիւնը ընդհանրա-  
պէս և նախագահը փակեց ժողովի հանդիսաւոր  
նիստը, առաջարկելով անդամներին գրվել երեք  
կօմիսիան երկու (սէկցիաներին), որոնցից  
բաղկացած պէտք է լինէր ամբողջ կոնգրէսը: Ե-  
րեք կօմիսիաները հետեւեալներն են. առաջինը  
նպատակ ունի մշակել գրականութեան և մամու-  
լին վերաբերեալ բուն իրաւաբանական հե-  
կան հարցեր, իսկ երրորդը պէտք է զեկուցում տալ  
ամեն երկրների գրողների հասարակական  
վիճակի մասին, այս վերջին տասն տարեկան ըն-  
թացքում: Անդամները ամենից շատ գրվեցան ա-  
ռաջին և երրորդ կօմիսիային: Ինձ էլ պատիւ  
արեցին մտնել երրորդ կօմիսիայի մէջ:

Հետեւալ օրվանից սկսվեցան կօմիսիաների  
նիստերը: Օտարագրի անդամներին կօմիսիան հե-  
տեւեալ օրը բաժանվելով երրորդ կօմիսիայից, ա-  
ռանձին նիստեր ունեցաւ երկու օր շարունակ  
Chaussée-d'Antin փողոցում գտնվող Ֆրանսիայի  
գրողների ընկերութեան գրասենյակում:

Օտարագրի իւրաքանչիւր անդամին առաջարկ-  
վեց կազմել մի զեկուցում իր երկրի գրականու-  
թեան և իր հայրենիքի գրողների վիճակի մա-  
սին, և այդ զեկուցումները այս օրը— 11-ին—  
են, պէտք է 24-ին ներկայացվին 3-օրը կօմիսիա-  
յին և ապա ընդհանուր ժողովին:

Մինչդեռ կոնգրէսի աշխատանքները շարու-  
նակվում են, կօմիսիաները շարունակում են ի-  
րանց նիստերն ունենալ մասնաւոր ընկերութեան  
գրասենյակում, իսկ ընդհանուր ժողովի նիստե-  
րը, բացի կիրակվայ օրից, շարունակվում են  
Տրոյադէոսի դահլիճում.—Պարիզի քաղաքային  
վարչութիւնը, Պարիզի թատրոնները, և նոյն իսկ  
կոնգրէսը՝ ամեն միջոց են գործ դնում կոնգրէսի  
անդամներին հաճելի դարձնելու Պարիզի մէջ ի-  
րանց կացութիւնը: Յունիսի 20-ին հրաւերեց ըն-  
տացանք ներկայ գտնվելու Մօնսո հրաշալի և  
ընդարձակ այգիում ի պատիւ ցուցահանդիսի:  
Եկազմեցան երեք փառաւոր տօնախմբու-  
թեան, յունիսի 22-ին կոնգրէսի անդամներն ըն-  
դունվեցանք քաղաքային վարչութեան փառաւոր  
պալատում, որտեղ մեզ նախաճաշիկ տուցին,  
ապա հրաւերեցին ստացանք կիրակի օր Բուլօնի  
անտառում ներկայ գտնվել Պարիզի դպրոցների  
աշակերտների մարմնամարզական տօնին, անդա-  
հար ձի տոնակներ ենք ստանում Պարիզի այլ  
և այլ թատրոններից, նոյնպէս և տոնակներ  
զանազան մուգեւմներով, բացի սրանից կիրակի  
օր հրաւեր ստացանք կառքով գնալ Պարիզից  
2 1/2 ժամ հեռու գտնվող Սեն-Ժերմէն ասված  
տեղը, որտեղ ճաշկերպութ պէտք է տրվէր կոնգ-  
րէսի անդամներին: Ժամը 9-ին առաւօտեան  
պէտք է դուրս գայինք Պարիզից և միայն 7-ին  
երկուշաբթի պէտք է վերադառնայինք Պարիզ:

Ի հարկէ հմար չը կայ ընդունել այդ բոլոր  
հրաւերները, քանի որ մարդը չէ կարող կտոր  
կտոր լինել, մասնաւոր եթէ մի և նոյն ժամա-  
նակ մարդը յանձն է առել և հետեւել բոլոր ժո-  
ղովներին, և որ և է զեկուցում գրել և թղթակ-  
ցութիւններ գրել իր լրագրին.... Իսկ Պարիզում  
տարածութիւնները ահագին են և մարդը սակաւ  
ժամանակ չէ կորցնում՝ նոյն իսկ ֆիլիպով կամ  
օմիլիոսով շրջելով, ուր մնալ թէ ոտով չափչփի  
այդ բոլոր անագին տարածութիւնները....  
Մտացայ ասել, որ կոնգրէսի նախագահ պ.

Ժիւլ Սիմօն կօնգրէսի բացման օրը, իր ճառի  
վերջում, գիմելով յատկապէս կօնգրէսի իտալացի  
անդամներին, ասեց. «Թէ և մեր վերջին ժողո-  
ւում, որտեղ ունեցաւ վեհեցիւյում, ուր  
տուեցիք մեզ մեր նիստերի համար վեհեցիւյի  
Դոմէրի փառաւոր պալատը, բայց մենք կարող  
ենք ձեզ հիւրասիրել միմյանք Տրոյադէոսի այդ  
դահլիճում, որտեղ բաւական չոր է անում: Եւ  
ճամբիւր, օրը շատ չոր լինելով և Տրոյադէոսի  
թէ և շատ ընդարձակ դահլիճը, գտնվելով չիու-  
թեան վերին յարկում,—շատ չոր էր անում դա-  
հլիճում: Ժիւլ Սիմօնի խօսքերը միմյանք պ. Պարիզի  
ականջին, մինիստրը նոյն իսկ հետեւալ ժողովին  
տեղեկացրեց կօնգրէսի նախագահին և անդամ-  
ներին, որ պատրաստ է առաջարկել կօնգրէսի  
նիստերի համար իր պալատի դահլիճները, Գրե-  
նէլ (Grenelle) փողոցի վրա: Ժողովը շնորհակա-  
լութեամբ ընդունեց այդ առաջարկութիւնը և  
այն օրից մեր նիստերը շարունակվում են ազ-  
գային լուսաւորութեան միջնաւորութեան փառա-  
ւոր պալատի դահլիճներում:

Հետեւալ նամակագրութեան մէջ կաշխատեմ  
կարճաւոր կերպով նկարագրել Parc de Mon-  
ceau ասված այգիում տեղի ունեցած տօնակը:  
Բուլօնի և Hôtel de Ville-ի (քաղաքային վար-  
չութեան տան) մէջ մեր ընդունելութեան մա-  
սին Նոյնպէս կը տեղեկացնեմ երրորդ կօմիսիա-  
յի աշխատանքները հետեւեալի մասին: Եւ ապա  
կը շարունակեմ խօսել կօնգրէսի գործունեու-  
թեան մասին:

Եթէ հրաւերեց ստացալ մասնակցել և խաղա-  
ղութեան կօնգրէսին, որի անդամներից մինն է  
և երկտասարդ հայ խմբագիր պ. Բրուսալի, որը  
յատկապէս այդ ժողովի համար լօնգոնից Պարիզ  
է եկել:

Իսկ ցուցահանդէսի մասին դեռ ես ոչինչ չեմ  
գրում, որովհետեւ աստիճան զբաղված լինելով,  
դեռ անցաւոր կերպով եմ տեսել թէ ցուցահան-  
դէսի բոլոր հրաշալիքները և թէ ճամբիւր հրե-  
շտ օր էլ քիչեւեւ աշտարակը:

Գրիգոր Արծրունի

Իշխան՝ Կառավարչապետին՝ Երևանի նահանգում



հասցիքից գուրկ լինելը: Այստեղ դեռ պահպանված է Գալիթ անյաղթ փրկությունից հետո, որ շատ մեծ ու ծանր լինելուն երկու մասի է բաժանված. որովհետև շատ մեծ դժուարություններ կը կարգադրվէր, որոնք համար եւ միայն հրապուրվեցայ զեղեցիկ գրեթե, պատկերներուն և ծաղկեկարներուն, որ նկարած է երջանկայիշատակը նուրբ մագաղաթի վրա: Տեսնել այդ ճառը, այդ ոսկեգոծ գրերն ու նկարները ու չը դգածվել անկարելի է: Չը գիտենք ժամանակի թէ վարդապետների անհոգութիւնից գաղտնագողի կտրված կայ մկրատով թէ պատկերներից և թէ մագաղաթից:

Երբեքն ժամանալը յայտնեց թէ Քրիստոսն էր և բը եկել են այդ վանքը, ճառից շատ բան արտագրեցին, կամեցան փողով փոխել թէ ճառը և թէ վանքի քանդակագործ դուռը, որան տեղ կամենում են եղել մարմարիօն դուռ չինել, վանահայրը մինչև անգամ ասում է, որ նրանք առաջարկեցին իբրև թէ դուռը և քառը հաւասար ծանրութեամբ փողով կշռել, բայց վանահայրը չէ ընդունում:

Երբեքն սուրբ Յովհաննէս վանքը նմանապէս լեռան վրա անտառի մէջ է, այս վանքը հարուստ է և ունի շատ թեմ. Տիգրանակերտի սիւլվանցի ասված թրքախոս հայերը նմանապէս այս վանքի ժողովուրդն են. այստեղ է սուրբ Կարապետի աջը, վանքը շատ զեղեցիկ է: Այստեղ մի շէշ կայ, և աւանդութիւն կայ, թէ դա այն շէշն է, որով իւր թափեցին Քրիստոսի վրա Բեթանիայում: Աւանդութիւնը ասում է, թէ այդ շէշը թաղէս առաքելն է բերած Հայաստան: Այստեղ է նմանապէս արծուաբեր խաչը Վեհաց փայտից. աւանդութեամբ ասվում է թէ արծիւը բերում է Երբեքն ծառի վրա իջնում, որա համար էլ կոչվում է արծուաբեր. յետոյ Գրիգոր Լուսաւորիչը գտնում է կենաց փայտի այդ մասը, չինել է վանքը և դնում վանքում. ու էլ թագաւոր ասաւորել է բերել Հայաստան: Այդ ծառը վանքի դրան առաջ է և չորս կողմից չը զաւարտված է, ծառը կանաչ է մնում ձմեռ թէ գարուն, և դրա տերեւները փորագրել համար իբրև դեղ կը տանեն: Այդ տեսակ աւանդութիւններ, թէ պատմական և թէ կրօնական, լին ժողովրդի մէջ:

Մատենականը դաշտումն է, սրա համար էլ աւանդութեամբ պատմվում է թէ Լուսաւորիչ սուրբ Կարապետի մարմինը բերելու միջոցին աւանակը չգրում է այստեղ, չգրած տեղից աղբիւր է բղխում. Լուսաւորիչը այս վանքը չինում է և սուրբ Կարապետի մասն է ամփոփում այստեղ, որա պատճառով և կոչվում է Մատենական. վանքում ջուր կը խմեն այդ աւանդական աղբիւրից: Այս վանքը կատարեալ աւերակ է դարձած. երկու վարդապետներ հսկում են երկու սենեակի և մէկ գրեթե վրա:

Մատենականից վերեն է Գէրը Աշտիշատայ Սահակ հայրապետի վանքը, այդտեղ է սուրբ Պարթևի գերեզմանը, և իր աղջկայ՝ Վարդանի ձոր Համազասպ Մամիկոնեանի կնոջ Շուշանիկի գերեզմանը. ժամանակին մեծ վանք է եղած, ինչպէս պարիսպներից երևում է, Աշտիշատ անուն բլրակի վրա: Կանխեղ միշտ վառ է սուրբերի գերեզմանների և մի մեծ խաչքարի առջև: Այդ խաչքարը Գէրը գիւղացի հայերի վկայութեամբ ամեն տարի վարդապետի տոնին քրտնում է և պտուղ պտուղ վազում: Սահակ հայրապետի տեղը Մուշի բոլոր վանքերի տեղից լաւ է ու սրտաբաց: Կան դեռ շատ վանքեր, որոնց պիտի այցելէի, բայց ժամանակը չը ներեց:

Պէտք է ասել Մուշի մէջ նկարագրելի շատ և շատ բան կայ, հետաքրքրական նիւթեր, որոնց մասին կարելի է հատորներ գրել, քանի որ դա թիւրքահայերի գլխաւոր կենտրոններից մէկն է, և արժանի ուշադրութեան:

Ս. Գ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Աւտորիական մամուլը այն կարծիքը յայտնելով, որ Աւտորիան խաղաղասիրական ցանկութիւններով է ներշնչված, այնուամենայնիւ խոստովանում է, որ վտանգաւոր կետեր միջազգային յարաբերութիւնների մէջ շատ կան:

—Քաղաքական շրջաններում յոյս ունեն, որ շուտով Շվեյցարիայի և Գերմանիայի մէջ ծաղած

տարաձայնութիւնները կանցնեն, և երկու պետութիւնների յարաբերութիւնները կանոնաւոր ընթացքի մէջ կը մտնեն:

—Գերմանական մի քանի լրագիրներ խօսելով սօցիալ-դեմոկրատ կուսակցութեան ուժեղանալու մասին Գերմանիայում, ասում են, որ այդ կուսակցութիւնը իր օկիդը Շվեյցարիայից առնելով, այնտեղ էլ գտնում է բոլոր նպատաւոր հանգամանքները իր գործունէութիւնը լայնացնելու համար:

—Անգլիական լրագրերի ժողովը իր վերջին նիստերից մէկում ընդունեց մի օրինագիծ, որի նպատակն է հնչեցնել հողային սեփականութեան մի ձեռքից միւս ձեռքը անցնելը:

—Հռոմի մի քանի լրագիրներ գիտն են այն մտքերից, որ յայտնել է կոմս Կալնօկի աւտորիական պատգամաւորների ժողովում:

—Սօֆիայից գրում են, որ Ֆրանց-Յովսէփի վերջին ճառը լաւ տպաւորութիւն է թողել այնտեղ: Այդ առիթով Կորուրգեան պրինցը շնորհակալութիւն է յայտնել Ստամբուլում, իբրև Բոլգարիայի քաղաքական այժմեան գրութեան ամենագործող պաշտպանին:

—Գերմանական մի քանի լրագիրներ, որոնց ճաշկոթիւնը միայն բարեւարձակութիւնն է կայանում, խօսելով Շվեյցարիայի մասին, Բիւնարից ասելի արմատ առաջարկութիւն են անում, —բաժանել Շվեյցարիան մի քանի պետութիւնների մէջ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ում չէ յայտնի, որ Եւրոպայում և Արիւսիայում Նախնայնեցող կանայք շատ տեսակ պաշտօններ են կատարում և այն էլ մեծ աջակցութեամբ: Այնտեղ կան գործելու համար արդէն շատ անողարկ է գտել, կան դասնում է և ուսուցչուհի, և առնետական, և հաշուապահ, և բանաւոր, և գրող, և խմբագիր, և քաղաքական, և նա պարտաւոր է նաւագործութեամբ, նկարչութեամբ: Օրից օր կան ստանդարտում է նորանոր պաշտօններ: Նորիս Միացեալ Նահանգներում կան օկուլ է և հոգևորական, և պաշտօն վարել, այնտեղ արդէն կան հոգևորական իրաւունք է ստացել պատկի ծէս էլ կատարելու: Ուրեմն առաջ գնալու ճանապարհը ամեն կողմից բացվում է...

Մեծ բանաստեղծ Վերգիլիոսի գերեզմանը, որ գտնվում է Պոլիպոլիսում, Նեպոլիի մօտ, աճուրդով ծախվեց: Գերեզմանի տէր Ֆրանսուային, որը քիչ փող չէր ստանում վերադառնալ գերեզմանը այցելողներից, ի զուր առաջարկում էր խաղական կառավարութեանը դնել գերեզմանը: Գերեզմանը փորելի ջառակաւոր չէր, և կամարաւոր գլխով, որ գտնվում է պողոտա այդու կենտրոնում և որը երբեմն պատկանում է եղել մեծ բանաստեղծի կալուածքին: Այնտեղ է նա գրել իր «Էնիդիդը»: Գժեղադարար, հանգուցեալի նշխարը պարունակող անօթը այժմ բոլորովին դատարկվել է:

Եւրոպայի Տոկիո քաղաքում այժմ հրատարակվում են 215 լրագիրներ և ամսագիրներ, որոնք Տոկիոյում 3,675,621 ընթերցողներ ունեն, Եւրոպայում (բացի մայրաքաղաքից) ունեն 1,631,827 ընթերցողներ, իսկ արտասահմանում—12,247 ընթերցողներ:

Պարիզի ցուցահանդիսի բացման օրից մինչև յունիսի 5-ը ցուցահանդիսը վճարովի տոմսակներով այցելել են 4,210,592 հոգի:

Գաւառական քաղաքի նորաբաց դպրոցում պատրաստականի աշակերտուհուն հարցնում են: —Ինչպէս է ուսուցիչն և դրա յար: Աշակերտուհին պատասխանում է՝ «Երա՛ն». իսկ ինչպէս կը լինի և դրա յարն էր: —«Երա՛ն», —վրա է բերում փոքրիկ աշակերտուհին:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆՍՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐՐՈՒԳ, 22 յունիսի: Լուրերին նայելով, զէմտվոնների հաստատութիւնների թէֆորմների վերաբերեալ օրինագիծը պետական խորհրդի այժմեան նստաշրջանում չի քննվել: Չէմտվոնների գլխաւորների պաշտօն հաստատուց յետոյ, նրանց վճիռներին վերաբերեալ դանդաղանք կը քննվեն գաւառական ատեսներում, որոնք կը լինեն ազնականների պարագլուխների նախադասութեամբ և բաղկացած երկու բաժանմունք:

ներից, վարչական, որոնց կը մասնակցեն զէմտվոնների գլխաւորները և դատաւորական, որոնց կը մասնակցեն հաշտարար դատաւորները: Գաւառական ատեսների վճիռների զէմ դանդաղ տրվում են նահանգական ատեսներին, որոնց նախագահում է նահանգապետը, իսկ դատաւորական գործերի վերաբերեալ ներկայ պիտի լինի նահանգական դատարանի նախագահը: Չէմտվոն շարունակում է պահել իր իրաւունքը պատաւոր հաշտարար դատաւորներ ընտրելու գործում:

ԱՂԱՋԱՐԱՒ, 23 յունիսի: «Pionier» լրագիրը հաղորդում է, որ ապստամբութիւն ծագեց Բաղդադում, ուր աջօրից վերադարձած մի քանի աւագներ, զանազան տեղերի ազգաբնակչութեան օգնութեամբ, բանաւ գրին խմբի պաշտօնական անձանց: Մագարից և Կարուլից խառնակութիւնների տեղը զօրքեր են ուղարկված:

ԲԵՐԼԻՆ, 23 յունիսի: Գերմանական պաշտօ-

նական լրագրում տպված դոկումէնտներից երեւում է, որ շվեյցարական կառավարութիւնը չէ կատարել օտարազգիների մշտական բնակութեան մասին 1876 թվ. գերմանա-շվեյցարական դաշնագրի 2-րդ յօդուածի համաձայն իր յանձն առած պարտաւորութիւնները, և այդ պատճառով գերմանական կառավարութիւնը կարող էր նոյնպէս այժմ դաշնագիրը անպէտք համարել. բայց ի նկատի ունենալով այն հետեւանքները, որ առաջ կը գան երկու պետութիւնների հպատակների համար, գերմանական կառավարութիւնը ասելի լաւ է համարում ծանուցանել դաշնագրի ժամանակաւիջողը լրանալու մասին, և այդ բանի համար գերմանական դեսպանը հարկաւոր լրագրութիւններ կը ստանայ:

Ժամանակաւոր խմբագիր Թ. ՏԵՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆՑ  
Հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐՏՈՐԻՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.  
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՆԻ և ԲԱՐՈՒՄԻ մէջ և փոխադարձ չինգաթի, յուլիսի 6-ին, ԱՆԱՏՈԼԻԱ (ANATOLIE) շրջանում, նաւապետ ԲՕՇԷԼ (BOSCHEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լճիջողուի տան, Նարեքէժնայա, և Թիֆլիսում՝ Նուրիկին Վլադիմիրի գալերեում, № 114.  
2—2 (24 և 1)

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ  
Հրաւիրում է երկու բարձրագոյն կրթութիւն ստացած ուսուցիչ ուսուցիչ լեզուի, ընդհանուր պատմութեան և ընդհանուր աշխարհագրութեան դասերի համար, համար հմուտ մանկավարժ երկրորդ նախաընթացների երկու զուգընթացների համար: Առաջինների վարձատրութիւնը պայմանաւոր է իսկ երկրորդներինը հինգհարկաւոր լուրջ: Ցանկացողները, ներկայացնելով իրանց ուսումնական վկայագրերը, թող դիմեն դպրանոցի տեսչին հետեւեալ հասցեով՝ Эривань, Доктору Арутюнянцу.  
2—8

ԴՐԱՄԱԳԼՈՒԹԻՒՆԵՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ  
ԸՆԴՀԱՆՈՐ ԳՈՒՄԱՐԸ 9,000,000 ՐՈՒՐԼՈՑ ԱՆԵԼԻ Է՝  
ԱՄԵՆԱՄԵԾ ԵՒ ՄԻԱԿ ՀԱՅՐԵՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ, ՈՐԸ ԲԱՑԱՌԱՊԷՍ ԶԲԱՂՎԱԾ Է  
ԿԵԱՆՔԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԵԼՈՎ՝ ՓՈԽԱԴԱՐՁ ՍԿԳՐՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ  
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄ Է  
1) ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԹԻՒՆԸ՝ ապահովագրվածի մասկան դէպքում  
2) ԴՐԱՄԱԳԼՈՒԹԻՒՆԵՐ 8ՄԱՋ՝ ծերութիւնը ապահովելու և աղջկներին օժիտ տալու համար  
3) Մշտական արդիւնքները, այրիների թոշակները, թաղման փողերը և այլն:  
Սակագները և մանրամասն բացատրութիւնները տրվում և ուղարկվում են ձրաբար:  
Գործակալութիւնը բացված է ԱԼԷՔՍԱՆԴՐԱՍՅՈՒՆԻ, ՎԷՐԷՍԻԻ քաղաքում, № 4: ԱԼԷՔՍԱՆԴՐԱՍՅՈՒՆԻ գործակալ նշանակված է Կ. Ի. Այոսկի:  
2—3  
Կլխաւոր գործակալութիւնը Թիֆլիսում, Վերամիսովկայա փողոց, տուն № 24.

Недавно приѣхалъ въ Тифлисъ  
ДАНТИСТЪ ВАЛЛАКЪ  
А М Е Р И К А Н Е Ц Ъ  
Докторъ зубной хирургіи Балтиморскаго Зубоврачебнаго училища въ АМЕРИКѢ, членъ Французскаго Зубоврачебнаго общества въ ПАРИЖѢ и имѣющій дипломъ Дантиста изъ ДЕРПТСКАГО университета.  
Принимаетъ больныхъ по зубнымъ болѣзнямъ ежедневно отъ 9 часовъ утра до 5 часовъ вечера у себя на квартирѣ, на СОЛОЛАКСКОЙ улицѣ, домъ протоіерія ОРЕБЕЛІ, № 16.  
ՆՈՐԵՐՈՒՄՍ ՀԱՍԱԻ ԹԻՖԼԻՍ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ  
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ՎԱԼԼԱԿ  
Դոկտոր ատամնաբուժութեան Ամերիկայի ԲԱՏԻՄՈՐ քաղաքի ատամնաբուժական դպրոցի, անդամ ՓԱՐԻՋԻ ատամնաբուժական ընկերութեան Գ. Վալլակ ունի ատամնաբուժի զիպով Դորպատի համալսարանից:  
Ընդունում է ատամների ջառով հիւանդներին ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 5 ժամ կէսօրից յետոյ, իր բնակարանում, Սոլոլակի փողոցում, առաջ քահանայ Օրբելի տանը, № 16  
9—10 (2)